

գուրժեն, տեսանեմ և զարտասուան որ ընդ ծնօտս ձեր վիժեալ իջանեն: Բրուտոս նորա է որդի. այլ զինչ. միթէ ոչ և գուք որդի նորա իցէք, իմն Հռովմայեցիք. նա զձեզ որդեգրեաց յիւրուսն սրտի. յանկարծ, եթէ գիտէիք զկամս նորա:

Ժող. Չբնչ իցէ:

ԱՆՏ. Հռովմ ժառանգ է նորա, ձեր են քանձք նորա. Կեսար և յետ մահու ձեր է հովանի ՚ի զիցն աղի. զձեզ միայն սիրէր նա. վասն ձեր միայն գնայր նա արդ յԱսիա. գնայր վասն ձեր ընդ քիրտն գալ և ընդ ապաժոյժ ՚ի փառս Հռովմայ, իմն Հռովմայեցիք. ասէր նա և զայս ձեզ գրէր իւր կտակ վերջին. ո՛ Հռովմայեցիք, ժողովուրդ Թագաւոր, որում ես ծառայ եմ. Թող Թագաւորեսցէ Կեսար ՚ի վերայ աշխարհի, զի և ՚ի վերայ Կեսարու Թագաւորեսցէ Հռովմ: Եթէ այսչափ ինչ արասցեն ընդ ձեզ Բրուտոս և Կասսիոս:

Ժող. Ա՛հ, ցաւ է մեզ և տագնապ անհնարին:

ԱՅԻՔ. Արդարեւ Կեսար հայր էր Հռովմայ:

ԱՆՏ. Այլ հայրն ձեր ոչ ևս կայ ՚ի միջի. անարի դաւով յափշտակեցաւ զիւրացն ՚ի միջոյ, պարծանքն բնութեան, աշխարհի և Հռովմայ: Ա՛հ, միթէ զասլիք գուք Թերեւս հօրն ձերում զպատիւ մահուն. եթէ ոչ աչք ձեր ցօղեսցեն արտասուս և ձեռք ձեր ՚ի տապան առեալ հանգուցեն զհայրն ձեր և զսիրելի բարեկամն: Ահաւս սիկ է նա առաջի աչաց ձերոց յարիւն Թաթաւեալ. (առեալ յգէ դէ Կեսարա):

Ժող. Ո՛ ողորմ կերպարան, ո՛ արտասուաց պատկեր:

ԱՆՏ. Ահաւասիկ են աճիւնացեալ նշխարք մեծութեան Հռովմայ. մանաւանդ թէ և աշխարհի. ահաւասիկ աստուածն վրէժինդի՛ր զոր պաշտեիքն, և որում երկրպագէին նոքին իսկ սպանողք դորա. սա է պարծանքն ձեր, հզօր ապաւէն անխաբ ապաստան մարտի, և խաղաղութեան ձեր ամուր վահան, որ երբեմն սարսեալ գողացոյց զաշխարհս ամենայն. որ և հանգերձեալ իսկ էր զգոռոզն Բաբելոն գերեւոց փաղանգ շղթայակապ ածել ձգել զհետ կառաց իւրոց աստ ՚ի մեր քաղաք: Ճանաչէք արդեօք, ո՛ Հռովմայեցիք, զձերն Կեսար, աղէ հայեցարուք ընդ նա, շօշափեցէք և տեսէք զվերս նորա. տեսէք զարիւնն, զոր արդ իսկ առաջի աչաց ձերոց հեղին տարապարտ ձեռքն տիրադրուժ. աստ եւ հար զնա Կիմերոս, աստ Իեկիմոս և Կասսիոս մեկեցին ստեպ զերկաթն արիւնխխանձ. և ո՛ւր ՚ի մարմնի աստ մեծի Կեսարու. աստ և Բրուտոս, անօրէնն Բրուտոս յանպարտ արիւն ծնողին իւրոյ զձեռսն շաղախեաց, և գաղանաբար ՚ի սիրտն մտեաց. իսկ Կեսար զինչ. հայեցեալ ընդ նա քաղցր սկամբ այն ինչ գիտապաստ արիւնողոք յերկիր Թաւալէր, ՚ի ներել փութայր, և որդի սիրելի զնա առձայնէր. հաւատացէք ինձ, ո՛ Հռովմայեցիք, ես աստ մօտ կայի զօղեալ յետ կուսէ լսել զամենայն. զայս միայն նա բարբառ արձակէր ՚ի մահուն իւրում. Ա՛հ, որդեակ իմ, որդեակ իմ, գոչէր, և գո՛ւ ևս, ո՛վ իմ Բրուտէ:

ՈՄՆ. Այ՛ նենդող դաւաձան, արժանի շանթընկէց հրոյն Արամաղղայ:

ԱՅԻՔ. Բարէ, արիւն նորա կայլակէ գեւ ևս:

ԱՆՏ. Արիւնս այս վրէժինդրութիւն ՚ի ձէնջ պաղատի, և յարիական բաղկաց այտի այգմ ակն ունի: Լուարուք լուարուք, ո՛ Հռովմայեցիք. զարթիք և լուարուք զբարբառ նորա, որ ինեւ ընդ ձեզ խօսի. եկայք ընդ իս փողեսցուք տագնապաւ ՚ի վերայ մոլեգին սպանողաց դորա, զայս միայն սփոփանս հայցեմ շնորհել հոգւոյն Կեսարու. դամբար ՚ի ձեռս առեալ ՚ի հրոյ անտի, ուր մարմնն նորա այրել պատրաստի. գիմեսցուք առ հասարակ շտապ տագնապաւ, հուր հարեալ բորբոքեսցուք քանդեսցուք զնշտիս մարգակտոր գաղանացն. անինայ սուր ՚ի կողս արկցուք ամբարշտացն. փեռեկեսցուք հանցուք կորղեսցուք ՚ի բաց զսիրտս նոցա, գէշ արկցուք գաղանաց երկրի, զոհ զիցուք հասարակաց հօրս նենգաղբաւ աստուածոցն մերոյ հայրենեացս. հապա, երթիցուք, ընկերք իմ, երթիցուք. ձեզ զԱնտոնիոս առէք առաջնորդ:

ՈՄՆ. Հապա, երթիցուք, հանցուք ընդ կառափն նոցա զքէն վրէժուն:

ԱՅԻ ՈՄՆ. Երգուեալ յանպարտ արիւն զիւցազին, արագարագ Թափեսցուք զվրէժ նորա. հապա, ՚ի գէն ընթացէք:

Ժող. Մահ, աստակուն, վրէժինդրութիւն:

ԱՆՏ. Մի շեջին, ո՛վ քաջք, բոցք բարկութեան. ձեպեսցուք գրոհ տալ ամբոխին, շարժեսցուք զնոսա ՚ի պատերազմ, իմաստութեամբ արագ արագ ինդրեսցուք զվրէժ արեան Կեսարու, և յարուսցուք զնա ՚ի նորին յաջորդ:

ՎԵՐՁ

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆՔ

Մրոշնքի մը կայ ճակնահար աւերաւահարտուքիւն: — Յլոր Բրիխտթրօֆ աւուամբ 12 տարեկան ռուս գեղացի տըղայ մը՝ 5 տարեկան եղած ատենը ծունկին վրայ իյնալով՝ աջ սրունքին վրայ վէրք մ'ունեցեր էր. և որովհետեւ անկողին ինկած ժամանակը սրունքը քաշուած կրծկած կը բռնէր, առողջանալէն ետքն ալ անկարելի եղաւ նորէն շտկելը, և հարկադրեցաւ քաշելու համար նեցուկ գործածել: Ամառը (1867ին) սաստիկ տաք օդով մը Յլոր իր քեււոյն հետ ձի հեծած իրենց արտերուն այցելութեան կ'երթային. յանկարծ միրիկ մ'եւաւ, ՚ի սկզբան թեթեւ որոտումներով և քիչ վերջը սաստիկ գոռում մը գուռաց. ձիերը զարհուրած խրտեցան, Յլոր ձիէն վար ինկաւ և մալրեցաւ. երբ խելքը վրան եկաւ՝ տեսաւ

որ գետին փռուած է. ուղեց ոտք ելլել, բայց տեսաւ որ ալ ոտք չունի, կայծակը տարած էր զայն, և ընդունայն տեղը չորս կողմը կը փնտռէր: Քեռին և ձիւրը իրմէ հեռու էին. տեսաւ որ իր շապիկը և զգեստներն ալ կարուածքին քովերէն ամբողջ պատուուած և մասամբ մ'ալ այրած էին: — Երկայնաձև մեծ ու պզտի չոր քոսեր իր մարմինը կը ծածկէին: Պատանին քիչ մը ատեն ինքզինքը գտնալէն ետքը՝ նորէն սաստիկ տկարութիւն զգալով դարձեալ գետին տարածուեցաւ: Քեռին ձին կեցընելով տեսաւ որ քեռորդուոյն ձին կար առանց իրեն: Ոչ ինքը և ոչ ալ երկու ձիերը փոքրիկ մնաս մը կրած էին: Յետոս դառնալով գտաւ իր թոռը՝ քնացած և մէկ սրունքէն զուրկ. հարկազրեցաւ կառքով մը զանիկայ քաղաք տանելու: Պատանին կառքին ընթանալուն սաստիկ ցաւ կ'իմանար սրունքէն, ուսկից քիչ մ'ալ արիւն վաղեց, բայց շուտով ինքն իրեն դադրեցաւ: — Այս դիպուածէս ութ օր վերջը պատանին հիւանդանոց մտաւ, ուր Պ. Ռոկովիչ զննեց վէրքը և գտաւ որ բոլորովին նման էր կանոնաւոր անդամահատութեան մը պատճառած վէրքին. կերպ մը ելեքտրակիզական անդամահատութիւն եղած էր իր առջի ունեցած վէրքէն վեր և ուրքէն քիչ մը վար. ծունկին ոսկրը և ազգրը անմնաս մնացած էին: Քիչ ատենէն սաստիկ ցաւերը դադրեցան, վէրքը սովորական միջոցներով սպիտացաւ և պատանին բոլորովին առողջացաւ: Քանի մը օրէն պատանուոյն ձիէն վար ինկած տեղուոյն մօտ մացառներու միջէն ոսկրը գտնուեցաւ, զոր ընտանիքը յիշատակի մը պէս կը պահեն: Պ. Ռոկովիչ զայն ալ քննեց և կ'ըսէ թէ զմոտեալ անդամոյ մը ձև ունի և գրեթէ չիհոտիր. ոսկրները ամբողջ էին, սև, ու ձևաւոր կերպով մը կոտրած:

Մեղրուաց խայրուածքիև դարման: — Երբ մեղու մը խայթէ գրեզ, մէկէն ցնդական ալբալիով (alcali volatil) թըր-

ջած լաթով մը երկու երեք անգամ վէրքը լուս: Այս կերպով հեղուկը խայթուածին մէջ կը թափանցէ և կ'ոչնչացընէ թունին զօրութիւնը: Եթէ ալբալի չունիս՝ կրնաս զործածել օճառի ջուր, աղոտ ջուր, մոխրաջուր և բևեկնիի ողիք: Եթէ այս հիւթերը չօգտեն, խայթուած մասը ո՛ր և է համեմային բուսով մը շփէ, ինչպէս են լավանտա, անանուխ, ծոթրին, և այլն. վերջը զգուշութեամբ մեղուին խայթոցը հանէ և աղաջրոյ մէջ թըջած պզտի լաթ մը դիր խայթուածին վրայ: Բայց որևէ կերպով, բնաւ չիքերես, ապա թէ ոչ ուռեցքը կը մեծնայ:

Թեւարոնք Էշրոպիոյ: — Գաղղիոյ Բեօքլը օրագիրը այսպէս կը հաշուէ արդի թէատրոններուն թիւը.

337	Թէատրոն 'ի Գաղղիա.
298	» յԻտալիա.
168	» 'ի Սպանիա.
159	» յԱնգլիա.
152	» յԱւստրիա.
76	» 'ի Բրուսիա.
115	» Գերմանիոյ միւս մասանց մէջ.
34	» 'ի Ռուսիա.
34	» 'ի Պելճիա.
23	» 'ի Հոլանտա.

1396 բովանդակը:

Լուսասնկարսկսն գոշուաշրոտքիւն: — Գաղղիոյ ուսումնական օրագիրները կը ծանուցանեն որ Պ. Լուզովիկոս Տիւրոզ տիւ Հաւրոն ուսեալ երիտասարդ մը, եօթը տարի շարունակ քննութենէ վերջը, լուծեց բնական գունոց լուսանկարուց վրայ տպաւորութեան առարկութիւնը: Հեղինակն իր նպատակին հասնելու գլխաւոր կէտը դրաւ այն սկզբանց վրայ, թէ ամենայն պարզ գոյնք երեքի կը վերածուին, 'ի կարմիր, 'ի դեղին և 'ի կապոյտ. և թէ ամենայն անթիւ գունաւորութիւնք բնութեան՝ ուրիշ բան չեն՝ բայց եթէ մեծ համեմատութեամբ բաղադրութիւնք այս երեք գունոց: Բոլորովին սոյն սկզբանցս վրայ հիմնեալ Տիւ Հաւրոնեան դրու-

թիւնն՝ երեք գունով զանազան պատկերներ ընդունելու վրայ է նոյն առարկայէն, մէկը կարմիր, մէկը դեղին և միւսը կապոյտ, և յետոյ ՚ի մի վերածել այս երեք լուսանկարքը: Այս երեք պատկերներս ընդունելու համար՝ առարկայէն ելած լուսոյ շառաւիղքն երեք պակեաց միջէն կ'անցնին, մէկը կանաչ, մէկը մանուշակագոյն և միւսը կարմիր նարնջագոյն, որք են լրացուցիչ կարմրի, դեղնի և կապուտի:

Բ Ա Ն Ա Լ Ի Ք

ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒՈՒԹԻՅ

(Տես երես 255)

526 Ի՞նչ պատճառաւ ճրագի մը պատրոյզն եթէ շատ երկայն ըլլայ՝ կը ծռի: — Իրեն յատուկ ծանրութիւնն է ծռելուն պատճառն:

527 Երբոր պատրոյզն շատ երկայն ըլլայ՝ ինչո՞ւ իր ծայրն դիզուած կ'ըլլայ: — Իր բամբակին ածղացած մասերն են դիզուողքն, որք անկէց բոլորովին չեն զատուիր, այլ հագիւ կպած ու կախուած կը մնան:

528 Ինչո՞ւ համար ճարպէ ճրագներն ստէպ պէտք կ'ունենան յարգարուելու (կամ կտրուելու): — Որովհետեւ բոցն պատելով զպատրոյզը՝ կ'արգելու իր ածղացած մասերն օդուն թթուածընին հետ զուգադրուելու, ասոր համար չիհատնիր, այլ կ'երկընայ. և բոցին պաղութիւն պատճառելով՝ նուազ լոյս մ'ալ կու տայ, եթէ պատշաճ կերպով չկտրուի ու չկարծուի:

529 Ինչո՞ւ համար մեղրամոմէ և ճարպիւղէ ճրագներն պէտք չեն ունենար յարգարուելու: — Որովհետեւ իրենց պատրոյզն հիւսուած է. և երբ հետզհետէ մեղրամոմն կամ ճարպիւղն այրի, ինքն ալ թեթեւ կերպով մը կը ծռի և ծայրն բոցին կենդրոնէն դուրս կ'ելլայ, այսինքն անոր արտաքին կոնոնէն, ուր կրնայ սպառիլ:

530 Ինչո՞ւ համար երբ պատրոյզն քիչ մը ծռի՝ ճրագին բոցն աւելի խտութիւն կը ստանայ: — Որովհետեւ ուղղահայեաց դիրքը կորսուեցընելով՝ պատրուզին ծայրն կը մտնէ բոցին արտաքին կոնոնին մէջ. ուր ածղուկն կը բաժնուի և կը ստանայ լուսակիզութիւն:

531 Ինչո՞ւ համար ճարպէ ճրագներուն պատրոյզն ալ չեն հիւսեր: — Որովհետեւ հիւսուածոյ պատրոյզն կը ծռի, և իրմէ ելած ջերմութիւնն հալեցընելով՝ երազութեամբ իր այն ծռած կողմի ճրագուն՝ կըրնայ բոլոր ճրագն ալ հալեցընել:

532 Ինչո՞ւ համար նոյն բանն չըլլար մեղրամոմէ և անարպիտէ ճրագաց ալ: — Որովհետեւ ասոնց գոյացութիւնն աւելի կարծր է, և նուազ հաղորդիչ ջերմութեան. ասոր համար բոցին շատ մօտ եղած մասն կը հալի, բայց այն թեթեւ հալած յատակին տակ՝ կը մնայ հաստատուն և պաղ նիւթն:

(Ասով կըրնայ իմացուիլ՝ թէ որչափ տարբերութիւն կայ հալման մեղրամոմին, ճարպիւղին և ճրագուին մէջ. այս վերջինս կը հեղուկանայ 58 հարիւրամասն ասճանի տաքութեամբ. բայց որովհետեւ հալած ճարպին տաքութիւնն՝ որ կը շօշափուի պատրուզին հետ՝ սաստիկ է, կրնայ ստորին կարգերուն մատակարարել անանկ ջերմութիւն մը՝ որ զանոնք բաւական խտութեամբ հալեցընէ: Մեղրամոմն և ճարպիւղն այսպէս չեն, որովհետեւ մոմն հալելու համար կը պահանջէ 62, 64 աստիճան, իսկ ճարպիւղն 70 աստիճան. ասկէց դիւրութեամբ կ'իմացուի որ վերին կարգին ջերմութիւնն գժուարաւ կը հաղորդուի ստորին զանգուածին հետ:)

533 Ի՞նչ բան է ճարպիւղն: — Գոյութիւն մըն է որ կը հանուի ճարպէն:

534 Ի՞նչ պատճառաւ ճարպն այնպէս կակուղ կ'ըլլայ երբ իրեն մէջ ճարպիւղ ունենայ, իսկ ինքն իրեն կարծր է: — Որովհետեւ այս գոյութենէն զատ՝ ճարպն կը պարունակէ ուրիշ մըն ալ, որ է իւղայինն և գրեթէ հեղուկ. ուստի հաստատուն մարմին մը երբ խառնուի հեղուկի մը հետ՝ կը պատճառէ միջակ վիճակ մը մաքրմանոյ, որ է կակոյտքիւնն:

535 Երբ ճրագ մը փչելով մարուի, ուստի կը ծագի այն գէշ հոտն՝ զոր ծխող պատրոյզն կը տարածէ: — Թուշական եղէ մը՝ կծուակ կոչուած, որուն հոտն շատ զզուելի է:

536 Ի՞նչպէս առաջ կու գայ այս գոյութիւնս: — Կը ձևանայ պատրուզին մէջ ասոր տաք եղած ատենը:

537 Ինչո՞ւ համար այս կծուուկն կը ձևանայ և ոչ կիզանուտ կազ: — Որովհետեւ ճարպն կատարելապէս չիլուծուիր, այլ մասամբ միայն:

(Կծուուկն կը բաղկանայ վեց մասն ածղուկով երեք մասն ջրածընով:)

538 Ի՞նչ գոյութենէ կը պատճառուի այն